

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսիստան դպրոցի 75-ամեակի առթիւ—թ. Հայոց Հրատ. Ընկերութիւնը—Բագ-
մավէպ'ը եւ եղբայրութեան քարոզը.

Մայիս ամսին մեր միջնակարգ դպրոցներից մէկը տօնեց իր
75-ամեակը: Ներսիստան դպրոցն էր այդ, որը գոյութիւն ունի
իբրև հայոց հոգևոր դպրանոց (սեմինարիա): Որպէս յացփնի է, ըստ
Խուսիսիայի հայոց հոգևոր կառավարութեան (=պոլոժենիե), ամեն
հայոց հոգևոր թեմ (—վիճակ, եպարխիա) իրաւունք ունի մի-մի
հոգևոր դպրանոց ունենալու. իսկ այդպիսներ Խուսիսյում վեցն
են—Երևանի, Շուշի, Շամախու, Պորի սահմանի մէջ է նաև
Բաքուն), Թիֆլիսի Վրաստանի և Խերեթիայի, (=որի մէջ և
Գանձակ, Քութայիս, Գորի, Ախալցխա, Ախալքալաք, բա-
թում), Աստրախանի (որի մէջն է և Հիւսիսային Կովկասը՝ Ղզլար,
Ծողովի, Արմաւիր, Թևմիրիսան-Շուշի և այլն, և Անդրկասպեան
երկիրը—Մերւ, Ասխաբադ և այլն) և, վերջապէս, Բեստրաբիայի
թեմը (որի մէջ է մասցեալ ամբողջ Եւրոպական Խուսիսն, Դորա-
մէջ Նոր-Նախիջևանը, Մոսկան, Պետերբուրգը, առաջնորդա-
նիսպ քաղաքը՝ Քիշնեւ):

Այդ վեց թեմերից դպրանոցներ ունին Թիֆլիսը, Երևանը,
Շուշին, Նոր-Նախիջևանը (վերջինս Բեստրաբիայի թեմի համար).
Իսկ Շամախին և Աստրախանը դեռ ևս չունին. Էջմիածինն էլ, իրք
կենտրոն, ունի իր հոգևոր ճեմարանը: Վերջինս մի քանի ամիս
առաջ տօնեց իր 25-ամեակը, Երևանինը 1888-ին տօնել է յիս-
նամեակը, այժմ Ներսիստանը, մայիսի 21-ին տօնեց իր 75-ամեակը:

Ներսիստան դպրոցը հիմնեց երբ դեռ ևս ոռոսա-հայոց հոգե-
ւոր կառավարութեան կանոնադրութիւնը չկար. և նա հիմնել էր
ոչ որպէս թեմական դպրոց, այլ առ հասարակ որպէս հայոց լուսա-
ուորութեան մի կենտրոն: Ոչ թէ թեմն է նորան սպեղծել, այլ Ներսէս
Աշտարակեցին, թէև ճիշտ է որ այն ժամանակ Թիֆլիսի թեմա-

կալ առաջնորդ էր նա: Եւ արդար է որ դպրոցն էլ վերջը հէնց նորա սրեղծողի անունովը ներսիսեան կոչւեց:

Երբ այդ դպրոցը հիմնեց—Երևանեան նահանգը, և դորա մէջ էջմիածինը, դեռ ևս պարսկական իշխանութեան ներքոյ էր. և կարգին դպրոց կարելի էր միայն ոռուաց իշխանութեան սահման-ներու մ երևակացել:

Լազարեանները արդէն սկիզբ էին դրել հայոց լուսաւորութեան գործին—հիմնելով իրենց ձեմարանը Մոսկվայում: Բայց առ հեռու էր ժողովրդի հողից: Եւ նոքա էլ զգացել էին այդ. դեռ ևս դարուս սկզբին նոյն Լազարեաններից մէկը կուակով թէկ փոքրիկ բայց ինչ և է մի գումար էր թողել Կովկասում հայոց դպրոց հիմնելու դէպքի համար:

Ներսիսեան դպրոցը իր ժամանակի հայկական լուսաւոր ազգասիրութեան մի արդայալութիւնը եղաւ, ինչպէս դորանից քիչ առաջ Լազարեան ճեմարանի բացումը և, ինչպէս դորանից դեռ շաբ առաջ, 18-րդ դարում Միհթար Աերասուացու ձեռնարկութիւնը արեմենան հայութեան մէջ, մի գործիչի, որի օրինակը, որպէս թւում է, յետագայում, իդէալի պէս աչքի առջև է ունեցել բարձրին ձգուղ ամեն հայ գործիչ, մինչև ներկայ դարուս առաջին քառորդը: Ներսիսեան դպրոցի հիմնարկութիւնը այդպիսով արդիւնք է դեռ ևս հին հայութեան ազգութիրական ձգումների—չկապւած ոչ մի քաղաքի, ոչ մի թեմի և ոչ իսկ լոկ Կովկասի սահմանների հետ, այլ կապւած ընդհանուր հայութեան հետ: Ժամանակն էր այդպէս: Եւ երբ ժամանակի ընթացքում, Ներսիսեան դպրոցը աւելի ու աւելի մօպեցաւ թեմական դպրոցի տիպարին, այնքան աւելի անհրաժեշտութիւն զգացւեց մի նոր դպրոցի, որը իր վրայ կրէր ընդհանրութեան դրոշը: Եւ սրեղծւեց Գէորգեան ճեմարանը, որի գաղափարը, իբրև կենդրոնական դպրոցի, փայ-փայում էր դեռ դարուս սկզբներում, և ամենից շաբ՝ նոյն Աշխարհակեցու կողմից, բայց որը չէր կարող իրագործւել այն ժամանակ—էջմիածինը պարսկական իշխանութեան տակ լինելու պատճառով, իսկ յետոյ—Ներսիսեան դպրոցի պարմառով, որի սրելծով յետագայում կաթողիկոս եղաւ, Թիֆլիսը դարձնելով իր Երկրորդ աթոռանիսոր տեղը—իր հիմնած դպրոցը իր աչքի առջև:

Եթէ աչքի անցնէք այդ Դպրոցի առաջին քառորդ դարու պատմութիւնը, կ' Փեսնէք, ի բաց առած միայն Ալարդարեանի մի քանի փարիները—շաբ քիչ մանկավարժական արդիւնք, բայց շաբ մեծ աղմուկներ, շաբ մեծ անկարգութիւններ. նոյն իսկ երկրորդ քառորդ դարում, դարձեալ ի բաց առած մի փոքրիկ շրջան—նաև շեանի փարիները,—կրկնել է նոյնը:

Որովհետեւ... մեր Դպրոցները չեն ունեցել մանկավարժական ղեկավար մարմին, և չերսիսեան Դպրոցն էլ կրել է այդ մարմինի պահապութեան բոլոր հերթականքները:

Իշխանութիւն բանեցնելու ձգորումը եղել է ղեկավոր սկզբունքը մեր Դպրոցների կառավարութեան: Եւ մի անգամ այդ ձգորումը աւելի շեշտով արփայացրել է հոգևոր բարձր կառավարութիւնը, այլ անդամներ—հոգաբարձութիւնները:

Բայց մի բարձր դպրոցական խորհուրդ, բարձր Դպրոցական բեսչութիւն միշտ պահասել է հայոց Դպրոցներին—ի սկզբանէ մինչև այսօր: Այդ կացութեամբ—միշտ և հանապաղ—թէ Դպրոցական, ծրագիրներն են շարունակ փոփոխել, թէ ուսուցիչները ու դեսունները: Իշխող Դրութիւննը եղած է անորոշութիւննը:

Այդ նոյնը, բայց միայն շաբ աւելի վատթար դրութեամբ, իշխել է Երևանի և Շուշւայ թեմական Դպրոցներուն:

Դպրոցները կառավարող երկու մարմինների մէջ—հոգևոր կառավարութեան ու հոգաբարձութիւնների—թաքուն կամ բացարձակ կուիր յաճախ այդ Դպրոցների կեանքի հութիւնն է կազմել:

Հայկական մամուլը այդ ինդրի մէջ—որ և մամուլի ամենամեծ խնդիրներից մէկն է կազմել—ոչ թէ աշխատից պարզութիւն մրցնել, խնդիրը իրօք ուսումնասիրել Դպրոցական շահերի փեսակէուից, այլ, ընդհակառակը, ինքն ընդդրիկց մրցող, կռւող մարմիններից մէկի կամ միւսի Դարբւ Մեղու Հայաստան, Մշակ, Արձագանք, Նոր-Դար—այդ պատկերն են ներկայացրել անցեալում, և, կանգուն մնացածները—այժմ էլ շարունակում են նոյն դերը, որ, կարող ենք ասել, միայն բարբարոսի Դեր է Դպրոցական այն քանի փափուկ գործի մէջ:

Ի՞նչ է եղել այդ թերթերի իրար Դէմ մլած Դպրոցական անվերջ կոիւների ասրառը: Ուրիշ ոչինչ՝ բայց եթէ այս, թէ ում

կողմանիցներ ընտրուեն հոգաբարձուներ — դպրոցի վրայ իշխելու համար եւ, մի գոյնի հոգաբարձութեան ժամանակով — միւս լրագրի բոլոր ջանքը եղած է սուս ու շորդ բաներով հոգաբարձութեան վարկը վայր ձգել, բայց միմիայն իր գոյնի հոգաբարձութիւն առաջացնելու համար, որպէս զի, Դերերը փոփոխւած Դէպքում, մինչ այդ պաշտոնաւոր թերթը կափարելապէս նոյն ձևով, նոյն դաքրիկայով յարձակումներ գործի նոր հոգաբարձութեան վրայ, բայց իսկապէս՝ հակառակորդ թերթի վրայ:

Եւ մեր խեղճ դպրոցները կրել են մեր օրաթերթերի մեծ մասամբ անմիտ կամ աւելի լաւ՝ չարամիտ կռիւների և մրցութեան բոլոր դառն հեգեւանքները: Դպրոցները եղած են իրար Դէմ կուելու և իրար անւանարկելու զէնքերից մէկը, շնորհիւ դպրոցական կառավարութեան բացակայութեան:

Եւ նայած թէ Եջմիածինը որ և է տրւած ժամանակում ո՞ր կուսակցութեան հետ էր, նա էլ ձեռք ձեռքի տրւած գնում էր նորա հետ կամ նորան հակառակ, աշխարելով հոգաբարձական կանոնադրութեան այս ու այն կէրը յարգել կամ չը յարգել:

Մեր մամուլը դպրոցական մեծ ինդրի մէջ երբէք չը կարողացաւ վերանալ նեղ կուսակցական-եսասիրական շրջանակից: Մամուլի բոլոր օրգանները ոչ միայն չարիւների Դէմն առնելու վրայ չէին մրածում, այլ և բարեկարգութեան խնդիրներ յարուցանելուց խոյս էին պալիս, այս պարզ հաշւով, որ բարեկարգութեան ուժիմի ներքոյն դժւար էր կուսակցական կամացականութիւններ կափարել: Օրինակ, ամեն գարի ուսուցիչներ փոփոխելու կարգը ծեղնտու անկարգութիւն էր, որի Դէմ այդ թերթերը հիմնական միջոց չէին առաջարկում, որովհետեւ այդ թերթերից ամեն մէկը իր հոգաբարձական թեկնածուներին ընդունելու յուսով՝ կը կամենար ոչ իր կուսակից ուսուցիչները արձակել և նոցա դեղը — իր կուսակիցները կարգել:

Գաւառներից կ'առեսնէիք թղթակցութիւնների բեռներ թեմական կամ ծխական դպրոցների այս ու այն ուսուցչի ու փեսչի հասցէին, ուր թղթակիցը, յաճախ մի խանութի գործակարար, նոցա մանկավարժական հմգութիւնների մասին էր խօսում—թեր կամ Դէմ, որպէս զի Դորանով Դրդի դեղական հոգաբարձութեան

վրայ՝ արձակելու կամ պահելու ակնարկւածներին. և այդ ամենի ասրառը լինում էր այն, թէ այս ինչ ուսուցիչը մեր թերթերից որին էր բաժանորդ...

Ոչ մի ուսուցիչ ապահով չէր և չէ իր պաշտօնի համար. ամեն ոք արձակւած է համարում տարին լրանալիս և աւագոյն ուսուցիչն անգամ տեսնում է իրեն այն դիրքի մէջ, ուր իր պաշտօնի մէջ մնալ-չմնալու խնդիրը կախւած է փեսչին բայց աւելի ևս՝ հոգաբարձութեանը առանձին ծառայութիւններով հաճոյանալու դրամադրութիւնից:

1888 թւականին մամուլի մէջ մի երկարագույն կրքոր բանակուր ծագեց մի թերթի ու մի ազգագի կացուցած ուսուցչի միջև այն առիթով, որ նախկին ուսուցիչը, իմանալով որ ինքը արձակւած է փեսչի հնարովի փեղեկութիւնների հիման վրայ, դիմել էր Կաթողիկոսին խնդիրքով որ հոգաբարձութեան նիստի մէջ փեսչի հաղորդած փեղեկութիւնները պաշտօնական քննութեան ենթարկւեն ծեսուչը, որի անձնական շահներին յարմար չէր գալիս այդ ուսուցիչը, սորան հեռացնելու համար հոգաբարձութեանը յայրնել էր այսպիսի բաներ թէ այդ ուսուցիչը դասերին կանոնաւոր կերպով չէր յաճախում և դասընթացը չէր անցել: Եւ բաղդի, դարօրինակ իրանիայով, այդ ասւել էր մի ուսուցչի համար, որի մասին լաւագոյն վկայութիւններ էին դպւել նոյն այն թերթի մէջ: Եւ այդպիսի պահանջը՝ փեսչի փեղեկութիւնները քննելու՝ նոյն այդ թերթը յայրաբարեց դպրոցի «ինքնավարութեան խախումն»: Պարզ խընդիրքը որ բարձր իշխանութիւնը փեսչի, ուրեմն և հոգաբարձութեան, պատճառաբանութիւնները ստուգէ քննիչների ձեռքով—յայրաբարում էր «ինքնավարութեան խախումն»: Հոգաբարձութիւնը դառնում էր ուրեմն նաև կարարելապէս «ինքնավար զրաբարութիւններ յօրինելու և ոչ ոք իրաւունք չպիտի ունենար նոյն իսկ մի բան քննելու, սկսուգելու...»

Հոգաբարձական մարմինը, իբր դպրոցական վարչական լիազօր մարմին—ահա այն իմաստութիւնը, որից դէ՛լ միածելն անգամ մեղք էր համարում մեր մամուլի մի մասը: Իսկ միւս մասը—իսկապէս նոյնն էր կարարում—բայց միայն թէօրիայով պաշտպանելով բարձր հոգեոր կառավարութիւնը—ներկայ դէպարտմենտ՝ կաթողի-

կոսի յաճախ նաև առաջնորդի—իրաւունքները՝ միջամբելու գեղական հոգաբարձութեան դնօրինութիւններին:

Վերջերս, թերթերից մէկը ամեն բանի Դեղը գորած լինել է կարծում բարձր հոգւոր կառավարութեան դիրապէս կառավարելու մէջ, մի բան, որի անհեթեթութիւնը զգացել են բոլոր կաթողիկոսները, բացի... Կարբեցի Յովհաննէսից... Խ'ակ է, այդ Դեղը նա նոր չէ զտել, բաց նա այդ յայտարարում է այժմ աւելի խրոխտ ձեռվ, որպէս մէկը, որ շատ վսրահ է իր ռեցէպութ զօրութեան վրայ...»

Եւ ահա, այս վիճակի մէջ, Դպրոցները չունեցան հասրադուն և միօրինակ ծրագիր անգամ, և ոչ էլ մի մանկավարժական ընդհանուր ղեկավարութիւն: Ուսուցիչները գործել են ամեն մէկը իր խելքի կրտածին պէս, ամեն մի թեմական Դպրոցում փարբեր ծառալով: Ո՞վ կ'կարծէր թէ ամեն դեսչի օրով ուսուցչական խումբը, Դպրոցներից ամեն մէկում, իր պարուղն է համարել թեմական Դպրոցների ծրագիրներ մշակել—միշտ կիսար թողնելով գործը և երբէք էլ փափագրւած ու քննադադրւած չլինելու բաղդին արժանանալով: Միմիայն ներսիսեան Դպրոցը քանի-քանի անգամ ձեռնարկել է այդ գործին—բոլորովին անհետեանք վախճանով:

Դպրոցական յառաջդիմութեան շահերը թելադրեցին մեզ մեր անդեկավար Դպրոցների հանգամանքները ներկայացնել Մուրճի մէջ և առաջարկել Դպրոցական-վարչական ռեֆորմ: (Տես Մուրճ 1892 թ. № 9 և 10): Մեֆորմը պիտի կայանար մեր Դպրոցները ղեկավարող մի բաձր մարմին սրելծելու մէջ, որի անդամները պիտի ընդունեին մեր բոլոր թեմական Դպրոցների հոգաբարձութիւնների ձայնադրութեամբ ու հասրագուէին կաթողիկոսի ձեռքով, եօթական դարի ժամանակամիջոցով: Այդ բարձր մարմինը—ուսումնական-վարչական հոգաբարձութիւն—պիտի պարփականութիւն ունենար Դպրոցական ծրագիրներ մշակելու—թէ ծխական և թէ թեմական Դպրոցների համար, անշուշտ կաթողիկոսի հասրագութեամբ, մանկավարժական հրահանգներ մշակելու բոլոր ուսուցիչների համար, հաւաքելով նախապէս ուսուցիչների Դիոսոլութիւնները, ապա՝ վերահասու լիներ Դպրոցական դասաւանդութեան և քննութիւններին, անձամբ, կամ նշանակւած անձերի միջոցով, և ալին. միշտ փափագրած հաշիւներ ներկայացնելով կաթողիկոսին ու ընդհանրութեանը

իր գործունէութեան և ամեն բարի կարարւած դպրոցական յառաջիմութեան մասին:

Տեղական հոգաբարձուները կ'շարունակէին մնալ թէ վնափեսական կառավարութեան համար և թէ որ և է ձախն օնենալով գետուչ և ուսուցիչներ ընտրելու մէջ, բայց արդէն այն եղանակով որ գույքմահաճութիւնները զսպւած մնալին:

Մեր առաջարկը չէր շցում ոչ ոքի քմահաճութիւնը — ոչ այս ու այն կուսակցութեան և ոչ հոգեար կառավարութեան: Եւ, չայցած որ ամեն երկրում, ուր եւրոպական իմաստով դպրոցներ կան, մեր առաջարկած մարմինը այս կամ այն ձեւով գոյութիւն ունի, մեր այդ առաջարկը մնացել է ցայտու չիրագործւած: 1892-ից դէս փակ եցան հայոց ծխական դպրոցները նախկին դրութեամբ, բայց մնացած են Գէորգեան ճեմարանը և թեմական մի քանի դպրոցներ, որոնք ամենը մնում են առանց ընդհանուր դպրոցական շեկավարութեան: Կորա փոխարէն՝ հոգեոր կառավարութիւնը փեր ջին բարիներս սկսեց փորձեր անել ուղղակի փետուններ նշանակելով այս ու այն թեմական դպրոցում, մի բան, որը զուրկ է որեւէ առողջ իշեայից: Դժութիւնները առաջմա եղած են միակ հետեւանքը այդ ձեւ կառավարութեան: Իսկ ներկայումս Կաթողիկոսի կարգադրութեամբ թեմական դպրոցների համար հոգաբարձական նոր ընդուրութիւններ պիտի կայանան Թիֆլիս, Երևան ու Նուշի, աղբարարութեամբ, որ հոգաբարձուներից երկուքը պիտի լինեն հոգեորականներ... Ինչ ամուլ միտք, ինչ ողորմելի միտք: Եւ իբր թէ այդ միտքը ծնունդ է հոգաբարութեան մեր դպրոցների համար... Ինչ ողորմելիութիւն... Քա, շարոշապ, մի հանճարեղ միտք է պատճելու այն անդարբերութիւնը, որ ցոյց է գուել հրապարակի վրայ շառաչող մոմուլը դէպի իսկական բարեկարգութեան խնդիրները, պարժելու այն ես-ը, որից դէն մամուլը բան չէր ուզում փեսնել դպրոցական այնքան քնքոյց գործի մէջ: Այն, իբրև պատճել — հոգաբարձութիւնների մէջ պարտարի: Կերպով քահանայանդամներ ընդունել փալը կամ նաև նշանակելը — նոյն իսկ հանճարեղ միտք է, բայց իբրև դպրոցական յառաջդիմութեան գալափարի ծնունդ — դա ծալը է ամբողջ դարի փորձառութեան վրայ...

Թիֆլիսի Հայոց Հրաբրաժական ընկերութիւնը ունեցաւ իր պարեկան ընդհանուր ժողովը մայիսի 13-ին, ուր պէտք է քննչէր ընկերութեան 1899 թ-ի գործօնէութիւնը Աչինչ մխիթարական բան Ամեն ինչ կրում էր եփ ու եփ զնալու դրոշմա Միու շաբ հեռաւ որ ժամանակւայ ընդհանուր ժողովներին, որոնց մասնակցում էին հարիւր ու մինչև իսկ շաբ աւելի անդամներ, այժմ փոխարինել են ընդհանուր ժողովներ շուրջ երեք դասնեակ հոգով, ժողովներ, որոնց մի լաւ կէսը ներկայացնում է ընկերութեան պաշտօնագարների կազմը. 14 պաշտօնագար անձեր ունի ընկերութեան վարչութիւնը և խմբագրական մասնաժողովը, իսկ ընդհանուր ժողովներին, ահա երկու դարի է, գալիս են դեղ բռնելու որ և է 15—20 հոգի ոչ պաշտօնագար անդամներ... Ընդհանուր ժողովը կոչւած է քննելու վարչութեան և խմբագր. մասնաժողովի գործունելութիւնը. և խեղիրները քննուում են այնպէս, որ ամեն մի պաշտօնեալի ձայնին միանում է կամ նորան հակառակում միմիայն մի համա ոչ պաշտօնեալի ձայն: Բաւական է որ պաշտօնագարների կազմը իր կողմ ունենայ որ և է հինգ ձայն սոսկ անդամներից, երբեմն նոյն իսկ երկու ձայն, կամ մի համ ձայն, և արդէն ձայների առաւելութիւնը միշտ ապահովւած կ'լինի յօդուր վարչութեան: Պարզ հաշիւ. ժողովի մէջ են 14 պաշտօնագարներ. մի ժողովի մէջ 29 հոգով, որոնցից 14-ը պաշտօնագարներ են, բաւական է որ մի հագրիկ ձայն աւելանայ նոցա կողմի վրայ, որ կազմու 15 ձայն ընդդէմ 14-ի. և այդ մէկ ձայնն էլ կարող է լինել մի անդամինը, որը ծառայող է ընկերութեան: Մօպաւորակէս նոյնն է երբժողովը կազմւած է 30—35 հոգուց, և աւելի վար, երբժողովը կազմում է 29-ից էլ պակաս անդամներից: Այդպիսի ժողովները արդէն կորցնում են այն նշանակութիւնը, որ սովորաբար յարկացւում է տարեկան ընդհանուր ժողովներին: Դոքա անսառողջ ընդհանուր ժողովներ են, ուր շաբ դժւարութեամբ կարող է որ և իդէ մէկի անկախ ձայնը իրեն նոյն իսկ լսելի անելի երբ այդ ձայնը որ և կերպ հակառակում է պաշտօնագարների խմբի այս ու այն հայեացքին, այս ու այն նոյն իսկ դգեղ, եթէ արդէն չասենք նաև անօրինի արարքին:

Ահա մի այդպիսի ժողովի մէջ կարդացւում է նախկին (1899)

գարւայ ընդհ. ժողովի արձանագրութիւնը և նույ փարօրինակ բան-կարդալ ժողովականների առջեւ թէ ով ինչ ասաց ժողովում՝ մի տարի առաջ, և միաժամանակ հարցնել—ով ինչ նկատողութիւն ունի անելու արձանագրութեան մասին։ Եւ դեռ աւելին. այդ նոր կարդացող ու դեռ չը հասպատւած արձանագրութեան ներքոյ սփորագրել են մի փարի առաջ եղած ժողովի նախագահը և քարտու շարը։ Սփորագրել են պրծել, —էլ ինչ նկատողութիւն կարող է վերցնել մի այդպիսի արձանագրութիւն։ Դուք կապացուցանէք թէ այս ինչ բանը այդպէս չի եղել, կապացուցանէք նոյն իսկ թէ բաց է թողնւած որ այս ինչ բանի համար այս ինչ վճիռն է կայացել։ Դորան կը համաձայնեն նոյն իսկ ամենքը, —ինչ օգուտը նախագահ ու քարտուղարը արդէն սփորագրել են պրծել, սիսալ է թէ ուղիղ—այդ արձանագրութիւնը պիտի տպւի։ Եւ դեռ նոր ժողովի նախագահը եղակացնում է ու վկայում թէ ռուբեմն ընդհ. ժողովը հասպատում է արձանագրութիւնը։ Այ ձեզ կոմեդիա...

Եւ ահա առաջ է գալիս արձանագրութեան սխալների մասին արւած նկատողութիւնների ինդիքը։ Ուր զցել այդ ռաւելորդ դարձած բեռը։ Զէ՞ որ միայն ձեմի համար կարդացւեց արձանագրութիւնը։ Էլ նկատողութիւնս որն է։ Եւ ահա, միշտ ի հարկէ ձայների առաւելութեամբ, վճռում են այդ ըստ երեսութին ոչ ոքին հարկաւոր նկատողութիւններն էլ այս գարւայ արձանագրութեան մէջ զցել, ու զալ 1901 թւականի ընդհ. ժողովի «հասպատմանը» ներկայացնել, որ ապա տպւի երկու տարի յետոյ 1902 թւականին լոյս տեսնելիք բեղեկագրի մէջ, ի մսիթարութիւն 1899 թւականի արձարագրութեան մասին նկատողութիւններ անող պարոնանդամների։

Ինչ կոմեդիա...

Եւ ձեմի պակասը գալիս է լրացնում արձանագրութիւնների բովանդակութիւնը ինքը։ Արձանագրութիւններ խօ չեն դոքա, այլ անշնորհք ֆէյլքոններ, բութ սրախօսութիւնների հաւաքածոներ, ֆիլիպիկներ մի հար անձի դէմ, որը երեսում է թէ ընդդիմադիր անդամի պաշտօն է սրանձնել։ Ինչ որ ընդհ. ժողովների մեծամասնութիւնն է, այն էլ սովորաբար արձանագնրութեան յափկութիւնն է։ Կընդրեն մի այնպիսի նախագահ ու մանտաւանդ մի այնպիսի

քարտուղար, որոնք լաւ արգայալիքից են ճանաչւած այդ մեծամասնութեան գրամադրութիւններին, այնպէս որ արձանագրութիւն ու ժողովի մեծամասնութեան գրամադրութիւն իրար լաւ ծածկեն եւ այդ գրամադրութեան համար արձանագրութեան մէջ կը խեղաթիւրեն, կայլալլեն գեղի ունեցած վիճաբանութիւնները, մէջ կը զցեն այս ու այն անդամի դէմ վիրաւորական, բայց ոչինչ չասող ոներ, միւս կողմից մեծամասնութեան անդամների արդասանած խօսքերը կը ձեւափռինեն, երբ նոցա արդասանողին այդ խօսքերը ամօթանք կը բերեն միայն, և այլն և այլն:

Օրինակի համար, կը գեսնէք որ լնդդիմադիր անդամի բերանը կ'դնեն այսպիսի խօսքեր. (անդամ այսինչ) ևաւելորդ է համարում և Բելինսկու Ծողմանտիզմ յօդւածի թարգմանութիւնը, քանի որ Բելինսկին ընդհանուր եւրոպական հոչակ չէ վայելում և կան աւելի լուրջ կրիպիկոսներ կան եւրոպական գրականութեան մէջ, (գես գեղեկագիր 1898 թ. էջ 37): Եւ երեակայեցէք որ այդ արձանագրութիւնն է իրօք արդասանաւած այս խօսքերի. «Ես աւելորդ եմ համարում Բելինսկու Ծողմանտիզմ յօդւածի թարգմանութիւնը, որովհետեւ ռոմանորիզմի մասին Բելինսկուց դէս Եւրոպայում լրյս են գեսել շատ լուրջ աշխափութիւններ, որոնցից կարելի էր աւելի յաջող ընդորութիւն անել»:

Եւ այլն և այլն: Մենք այսգել չենք կամենում սխալներ ուշակել, այլ միայն դրութիւն ներկայացնել. այդ մէկ օրինակն էլ բաւական է արձանագրութիւնների ոգին բնորոշելու համար: Մի քանի գարի է արդէն որ արձանագրութիւնները սիստեմագրիկաբար այդ ուղղութեամբ են գրանում:

Բայց ընկերութեան այդ ուղղութիւնը դեռ շատ աւելի հեռուն էլ է գնացել. արձանագրութիւններից սկսել են սիստեմագրիկաբար ջնջութել ընդհանուր այն վճիռները, որոնք կայացել են ընդդիմադիր անդամի առաջարկութեամբ, ընդդիմ իրենց՝ ընկերութեան գործերը այժմ զեկավարողների կամքի: Այդ իրողութիւնը հասպագուեց ներկայ մայիսի 13-ի ընդհանուր ժողովի մէջ, և միայն սպագիւ կարող է բերել ժողովի գէլժ մի մասին, որի աչքին իրողութիւնը այնքան լուրջ թւաց, որ ժողովի չափւած ժամերից իրկուսը միմիայն իրողութիւնը հասպագու վկայու-

թիւնները լսելու և չարիքի դէմն առնելու միջոցների քննութեանը՝ նոհրեց, թէև առանց անմիջական հետևանքի.... իրենք մեղադլը ւոյները աշխագում եին պարապանագուութիւնը իրենց ուօսրի վրայից թոթափել. ուստիք որ վարչութիւնը միայն պապում է արձանագրութիւնը այնպէս, ինչպէս վերջինս յանձնուում է իրեն, սպառագրութեամբ ընդհանուր նախագահի և քարտուղարին. ամենք չենք խառնուում այդ գործինս...

Չեն խառնուում.. Եւ հարկաւոր էլ չէ քիառնւել այդպիսի բաներ սպեշելու համար. բաւական է միայն ծուռ ոգի ունենալ. և ծուռ ոգու ինպրածները նախագահութեան և քարտուղարութեան համար իրենց անելիքը արդէն առաջուց գիտեն... Եւ ով կկարծէր թէ այդպիսի նպապակների ծառայեցնուում է նոյն իսկ մամուլի մի օրդան...

Ընդհանուր ժողովները մարդասակաւ, արձանագրութիւնները անհանական կրքերի օրդան դարձրած: Ի՞նչ յառաջդիմութեան խթան կարող է լինել այդպիսի ուղղութիւնը: Ընկերութեան կոչումը գըրքեր պապելն է և գըրքեր պարածելլը: Ընկերութիւնը հիմնած 1879 թ., սկսում է վերակենդանանալ կամ աւելի լաւ ասած՝ կենդանանալ միայն 1891 թւականից: Բայց այս ութը պարհներում ընկերութիւնը յառաջդիմութիւն չի անում. նա մնում է մի կէտի վրայ կանգնած: Գըրքերը պիտի դափել ըստ յափկութեան և ըստ քանակութեան: Յափկութեամբ գըրքերի արժէքը այս ութ պարիներում տարիհանաբար ընկել է: Բայց արդէն չի կարելի երկու գուսակ կարծիքի լինել քանակի մասին, որը, ուզէք չուզէք, չափելով միայն կարելի է իմանալ: Էջերի մեծութիւնները պարբեր և գներ նշանակելը կամայական լինելով այլ և այլ գըրքերի համար, գըրքերի քանակի համար համեմատապէս ամենից լաւ չափս կարող են ծառայել պարանական և թշթի ծախքերը: Արդ, դեռ ևս 1892 թւականին «Հրապարակութեան» համար բոլոր ծախքերը (բաղարան, թուղթ, հեղինակներին վարձադրութիւն) կազմում էին 5.156 ռ., իսկ 1899-ին միայն 4.346 ռ.: Տպարանի ու թշթի համար ծախքերը առանձին ցոյց են պրւած դեղիկագիրներում:

միայն 1894 թւականից, երբ դոքա կազմում էին $742 + 986 = 1.728$ սուբլի. յետոյ —

1895	թ.	տպ.	$2.424 + \text{թուղթ}$	970,	միասին	3.394 սուբլի
1896	թ.	,	$2.743 +$	1876,	,	4.619 ,
1897	թ.	,	$1.600 +$	1837,	,	3.437 ,
1898	թ.	,	$1.057 +$	510,	,	1.567 ,

Այսպիսով մօտ 3.400 սուբլուց 1895 թին և մօտ 4.120 սուբլուց 1896 թին՝ տպարանի ու թղթի ծախըլ իջել էր 1898-ին որ և է 1.567 սուբլու... Այդ՝ մի երրորդ մասն է 1896 թւականի գրարդական, գործունեութեան...

Տայց ինչո՞ւ կանգ առնանք 1898 թի վրայ: Որովհերեւ ընկերութեան, արագաքայլ երագնացութեան դէմ առաւ մի խոշոր նոէր (Պօղոսեանի 10 հազար), որի գումարից 1500 սուբլի աւելացաւ 1899 թի մուգք և ելքին, որի շնորհիւ 1899-ին տպարանական ու թղթի ծախըլ (մէջը հաշւած նաև պատիերների ծախըլ) եղաւ արդէն 2.924 սուբլի, որը շնայած դորան, դեռ էլի բաւականին պակաս է 1897, 1896 և նոյն իսկ 1895 թւականների հաշվեց...

Գրարդապութիւնը, ուրեմն, ոչ միայն չի յառաջադիմել, այլ դեռ զգալապէս պակասել է: Եւ դեռ մենք ասում էինք քիչ առաջ թէ նոյն կետի վրայ է մնացել... որովհետեւ կ'կամենալինք որ գոնէ այդպէս լինէր...

Իսկ զրբեր տարածելը... նոյն սառուցային կէտի վրայ է: Դեռ 1895 թ. անդամավճար սրացւած էր 2.520 ռ. (և մօտ նոյնքան սուբլու զիրք տրւած անդամներին) և հասով վաճառւած էր 2.405 սուբլու. այսպէս որ այդ հաշւով զիրք ցրւած էր դրամով 4.925 սուբլու. բայց 1899-ին անդամավճար սրացւած է 1.411 սուբլի և հասով վաճառւած է 1646 սուբլու, լնդամէնը դրամով զիրք տրւած ու վաճառւած է. 3.057 ռ., ուրեմն մօտ հազար սուբլի աւելի պակաս:

Մխիթարական չէ նաև լնկերութեան անդամների թւի զարդացումը. ճիշդ է, անդամ զրւողների թիւը ութ տարւայ ընթացքում 357-ից (1892 թ.) բարձրացել էր 570-ի (1897 թ.),

բայց դորանից Դէս արդէն իջել է: Եւ դորանից աւելի կարևոր հանգամանքն այն է, որ կանխավճար անդամների թիւը սոսկալի չափով նւազել է այս վերջին չորս տարիներում: Այսպէս, մինչ-
դեռ կանխավճար անդամների թիւն էր —

	1895 թ.-ին	420 հոգի	{	այսինքն բոլոր անդամ գրւածերը
	1896 թ.-ին	514 հոգի		
արդէն	1897 թ.-ին	404 հոգի,	այսինքն անդամների	70 0/0-ը
	1898 թ.-ին	289 հոգի,	»	60 0/0-ը
	1899 թ.-ին	235 հոգի,	»	45 0/0-ը

Ճիշտ է, 97 և 98 թւականների ապառիկաւորները իրենց պարզութ վճարել են յետագայ տարին կամ տարիները, բայց ապառիկներ լինելը արդէն ինքնին չարիք լինելուց զատ, —իբր երկոյթ՝ դեռ նոր է, և արդէն այնքան սաստիկ զարգացած մի երեք տարւայ ընթացքում: Կարելի է սպասել, որ այդպէս շարունակելով՝ կսկսեն նաև ապառիկները կորչել և իսկական անդամների թիւը այժմեանից էլ աւելի կ'իջնի: Ոչ միայն մի ընկերութիւն իր կանոնադրութիւնով, որը պահանջում է կանխավճարը, այլ և ոչ մի թերթի խմբագրութիւն չի թոյլ տալ բաժանորդների 65 0/0-ը ապառիկ, այն էլ տարին լրանալուց յետով: Այդ ուղղակի նշանակում է անդամների 65 տոկոսի կորուսով ընկերութեան մի տարւայ համար, որովհետեւ ապառիկաւորը թէ յաջորդ տարին վճարի էլ անցեալի համար, —սովորաբար նա կ'ինայ ապառիկաւոր ընթացիկ տարւայն համար, ուրեմն 2—300 հոգու տարեվճար արդէն մէջ տեղից ընդմիշտ վերցրած պիտի համարել¹⁾:

Ինչ տիսակդրից էլ նայելու լինիք —ամեն կողմից ընկերութեան անկման նշանները ակներեւ են.

¹⁾ Արքան էլ պարերեական թերթի հանդամանքները այլ են շրաբ, ընկերութեան բնաւորութիւնից, բայց և այսպէս, քանի որ ընկերութիւնը, Յ. Ա. անդամավճարի փոխարէն առաջ 5 ս. ալժմ 8 ոռութեան գրքեր է տալիս անդամներին՝ սոցա ընդունութեամբ, անհետաքրքիր չէ այս որ Մուրճը իրը ամսագիր, բաժանորդների թւի նկարմամբ Հրատ. ընկերութիւնից տարեր է եղած, այսպէս, մինչդեռ Մուրճը 1890-ին 200 և 1892-ին նոյնքան բաժանորդ ունէր, 1899 թ.-ին ունեցաւ վճարած մօտ 400 բաժանորդ:

Բազմավետը վերջին ժամանակներու շաբ է գրութ եղբայր
և մենք բնաբանի վրայ։ Դորանով ուղում է առել թէ կաթողիկ
և լուսաւորչական։ Հայերը իրար եղբայրներ են, որ, սակայն,
ուր բան չէ Դիրմամբ չակերպների մէջ առանք այն երկու խօս-
քերը. Բամավետը, իրը կաթոլիկ կրօնական միաբանութեան թերթ,
նախ կաթողիկեա! (=կաթոլիկ) կամի, յեղոյ միայն լուսաւորչական,
թէկուզ վերջիններս մի քանի քանեակ անգամ առելի լինին
թւով քան կաթոլիկ հայերը։ Բազմավետը իր քարոզով ուշ է
ասպարեզ գալիս։ Մի աշնակիսի ժամանակ, երբ ազգերի առա-
ջաւոր հասարակութիւնները և նոյն արդայացրից մամուլը գար-
բեր ազգերի եղբայրակցութիւնն են քարոզում և մինչեւ իսկ
դեպի այդ հետը բանով ազգերի համերաշխութեան, շահերի փո-
խադարձութեան վրայ հիմնած միջազգացին իրաւունքի զարգաց-
ման վրայ են աշխատում, շաբ ուշացած քարոզ է միևնույն ազգի
կրօնավետ բաժնու մասերի եղբայրութիւնը՝ շարունակական քարո-
զի բնաբան ընդունելու։ Բազմավետից իր այդ քարոզով միայն
հնութիւն է բուրում Այս, երբ բարբեր կրօնով ժողովուրդները
այնուամենանիւ մոլորում են և իրար առում հալածում թիւրի-
մացութիւնների պահմառով պէտք է այդ թիւրիմացութիւնները
պարզել, բայց գալ ու լուրջ ձևով ապացուցանել թէ մի ազգի
կրօնով տարբեր համայնքները պէտք է իրենց մի ազգ զդան, — այդ
արդէն մի հնարանութիւն է այժմ։

Որքան սակայն անկեղծ է Բազմավետը իր եղբայրասիրութեան
ուշացած քարոզներով. և կամ որքան նա հասկացող է հանդիսա-
նում ազգային-կրօնական խնդիրներում։ Տարաբախտարար Վենեցու-
կի Մխիթարեան միաբանութեան հայեցակէտու այդ խնդիրներում
այժմ ևս նոյնքան նել է որքան նա եղիլ է առաջ։ Դևա ամենից
առաջ նկարենք, որ եղբայր նմք մեքը լայսքան ուշ քարոզը
միայն կաթոլիկ և լուսաւորչական։ Հայերին ինկարի ունի, և ու-
կրօնի անխարութիւնը առհասարակ, այնպէս որ այդ նոյն Բազ-
մավետը կաթուղիկեայ և լուսաւորչական, հայերի դէմ է կանգնեց-
նում բոլոքական հայերին... Այդ իս այդպէս. բայց նախ
մի հարց տանք, թէ որքան ճշմարիտ է, թէ հայութիւնը կրօնա-

կան վէճերով զբաղւած լինի, ինչպէս այդ հաւափացնել է ուզում Բազմավէպ'ը. մի լսեցէք.

Աերջապէս կրօնքի վէճերը միշտ տաք և բռնկած լինելով, փոխադարձ առելութիւնը արմագ դրաւ մեր հայ հասարակութեանց մէջ, և այս արելութիւնը՝ ալս երկու հասարակութեանց միջն եղած փոքր խրամագը չափաղանց ընդարձակեց և խորցուց. որ պիտի ամփոփի և անհետանափ, եթէ հալածենք կրօնական վէճերն և դարանջագ հայութիւն՝ իրեն հարազագ որդիք հալրենեաց, միմեանց ձեռք դառն գործեն ապին հառաջադիմութեան համար.

Զեռք դանք միմեանց և թալկացեալ ազգութիւնը՝ հոգի ու շունչ պիտի առնու և պիտի սթափի իր մեռելատիպ նիրէն. (...) Զեռք դանք միմեանց ամեն պարագաներու մէջ, և այն առեն պիտի իմանանք թէ ազգմ ենք և ազգութիւն մը կը կազմենք. թուղունք կրօնական վէճերը կրօնական թերթերու և ասուածաբանական վարդապետներու, որոնցմէ դուրս ամեն անհագ և ամեն լրագրութիւն թուղ պարապի այն նիրական գործին, ուսկից ազգին հառաջադիմութիւնը կը սպասւի. (...)

Միթէ իրօք հայութիւնը ներկայումս այնպէս զբաղւած է—և զբաղւածէնա առհասարակ—կրօնական վէճերով, ինչպէս այդներկայաց րած է հէնց միայն մեր այդ առաջ բերած փողերի մէջ։ Պարզէ որ Բազմավէպ'ը շեշտեր է դնում այնպ եղ, ուր իրականութիւնը այլ բան պիտի թելադրէր։ Իրականութիւնը կարող էր, այն թելադրել այսպիսի մի հարց, որ եթէ ճիշտ է թէ հայ-կաթոլիկ համայնքները և հայ-կաթոլիկ հասփառութիւները իրենց լքւած են զգում ազգի աւելի մեծ հափւածի կողմից, ինչպէս այդ վկայում է Բազմավէպը, ինչ ոզի պէտք էր ներշնչել նոցա որ աւելի խրախուսւած լինին ազգութեան զաշափարը և դորա հետ կապւած բոլոր զրկանքները իրենց վրայ կող հայ-լուսաւորչականների կողմից։ Որովհետեւ երկու բան անկասկած է. այն որ կաթոլիկ հայերի խորթութիւնը լուսաւորչական հայերից հետքանք է ոչ թէ, ինչպէս Բազմավէպ'ն է ասում, առաջինների կրած հալածանքի լուսաւորչականների կողմից, այլ հետեւանք այն դարբեր ոգուն, որ իր հետ փարել է կաթոլիկ սրբութագանդան ամեն դեղ, ուր նա հասփառւել է ի հաշիւ այլ քրիոփոնէական եկեղեցիների։ Այդ չար ոզին հանրածանօթ է ոչ միայն մեզ հայերիս, այլ և բովանդակ աշխարհին։ Բազմավէպ'ը, ի նկատի առէք, միմիայն լուսաւորչականներին է դիմում եղբայր եմք մենք քարոզով. և այդ էլ դար-

ձեալ նեղ կրօնական ոգու ինելադրութիւն է: Նա պնդում է թէ լուսաւորչականներից հալածւած լինելն է սպառճառը որ հայկա-թովիկների մի մեծ մասը մոռացաւ մայրենի լեզուն—հայերէնը—և որ նոյն պարճառով է որ կաթովիկները կրում եմ օրար անուններ.

Ալլիով կաթովիկէ հայք՝ այն օրէն որ շաբ դառն հալածանքէր կրեցին իրենց արիւնակից հայերէն, արելութիւնը սրիպեց նոյն իսկ լեզով անջարժել ալր հալածչաց դասակարդէն և անոնց մեծ մասը մոռացաւ հայրենի բարբառը և ավախօս եղան, և այս ոլբալի եղելութեան նշաններն՝ դեռ կ'երեին Փոքր Ասիով և Պուտու հայ կաթովիկէ հասարակութեանց մէջ նոյն հալածանքներն՝ սրիպեց զանթնք, որ նաև անւամբ որոշէին իրենց եղբայրներէն, և այլ ևս անոնց նոր սերունդքն չեն կոչւիր Տիգրան, Վաղարշակ, Արշամ, Հոփիսիմէ, այլ էթիէն, Հանրի, Անթուան, Անժելառ,

Այս երկոյթները իսկական դիորդութիւններից ու պարմական հետազոտութիւններից են դուրս բերւած, թէ դորանով միայն, դրաւորութիւն, էվֆեքտ գործելու համար՝ սպառմական երկոյթների պարճառաբանութիւնն է յեղաշրջումն Կաթովիկները, կազմելով փոքրիկ անջար համայնքներ, փեղ-փեղ շար անդօր էին իրենց լեզուն պահպաննելու համար,—ահա աւելի ճիշփ մեկնումը. իսկ շաբ գեղ նոքա պահպաննել են մայրենի լեզուն մինչև այսօր: Եւ այդ բանին ենթարկել են նաև հայ-լուսաւորչականները, որոնք զանազան գեղերում մոռացել են իրենց հայրենի լեզուն, մի երկոյթ, որ Բազմավէպի խմբագրութեան շար լաւ յայգնի է:

Եւ իրաւ է արդեօք, թէ

«Կաթովիկների կ'արեն զլուսաւորչականս՝ վասն զի դեռ չեն մոռացած այն հալածանքները՝ և կորորածները՝ զորս կրեցին մոլեռան-դութենէ դրդեալ»:

Դէմ արդէն սրիպւած ենք ասելու որ կաթովիկները մի առանձին ժառանգական դիւրազգածութեան բէր են քան բոլոր այլ ազգերի անհարուները: Թիֆլիսը անցեալ դարի վերջը Աղա-Մահմադիսան շահի ձեռքով աւերակ դարձեց, սոսկալի կորորած կրեց ժողովուրդը, որը մեծ մասամբ ցրեւ եղաւ և հազարները գերի դարւեցան,—բայց արդէն շաբ դասնեակ դարիներից ի վեր գոելական ժողովուրդը առհելի դէպքը մոռացեւթեան է դրել և նոր սերունդը աւերմունքի հարիւրամեակը լրանալու առիթով գըպ-

ած յօդւածներից միայն գոեղեկութիւն ունեցաւ պարսկական այն գոզանութիւնների մասին, — բայց կաթոլիկները, ըստ Բաղմավէպի միուսւմաւսր վկայութեան, իբր թէ Շիռ չեն սուցած այն հալածանքները և կորորածները (?), որ նոցանից բասնեակ հազար հոգի կրեցին մի քանի սերունդ առաջ, Կ. Պոլսի մէջ, մի հալածանքի, որի մէջ բամբիկ կառավարութեան եւրոպակախ քաշնքականութիւնը նոյնքան և աւելի դեր կարարեց քան հայոց պատրիարքի սրբութիւնը:

Միթէ, ուրեմն, կողմանպահութեան ոգին չէ դարձեալ որ Բաղմավէպին ասել է ուալիս հայ-լուսաւորչականների հաշուի այն, ինչ նա չպիտի ասէր եթէ անկեղծ լինէր իր եղբայր եմք մենք քարզով։ Ինչու նա իր յօդւածի մէջ պարտականութիւններ չի դնում հայ-կաթոլիկների վրայ՝ լուսաւորչականների նկարմամբ, այլ իր խօսքը ուշլում է միայն հայ-լուսաւորչականներին։ Ինչու Որովհետեւ հազարէպի լուսաւորչական միաբանութեան օրգան, անկեղծ չէ։ Անկեղծ լինելուն խանդարում է կաթոլիկ կղերականութեան խոր արմագ ձգած ոգին, այն, որի դէմ բողոքում է ամբողջ լուսաւոր աշխարհը, երբեմն արդիւնքով, երբեմն ապարդիւն։ Տեսէք թէ ինչ մարդասիրական ոգով էր գրում կաթոլիկ հայր Նարմբրանը հայ որբերի մասին։ և տեղացին հնչուն Դրամենը։ հանգանակութեան մէջ մաս ունեցան նաև հայ-լուսաւորչականներ։ վերջը իմացւեց, որ այդ գումարները ծառայում էին Շողիներ փրկելու հերձւածող եկեղեցու փարախից, և Մխիթարեան միաբան ձնվուեան ծառացում էր Վանում իբր այդ հոգեփրկութեան գործակալ։ Եւ ձայն դուրս եկաւ թէ 30.000 լուսաւորչականների։ հացի փոխարէն, առիսկել են կաթոլիկութիւն ընդունելու Վան և շրջակայքը ։ Թաղթանակից այն գոչումները որ արձակեց հայր Նարմբրանը իր ծրագրով կարարած եղելութեան առթիւ, պարզ ապացուցին որ կաթոլիկ կղերի հայ որբերին օդնելլ իսկզբանէ այլ նպագակ չէր ունեցած, բայց եթէ նեղնընկած հայ-լուսաւորչականներին կաթոլիկութիւն ընդունել ուուլ։ Յինիզմը չէր կարող աւելի մեծ մերկութեամբ երեան գալ։ Եւ ծիշտ այդ բապէին Կ. Պոլսում անսպորադիր բրոշիւր հրափարակւեց—անկասկած՝ գործ կաթոլիկ հայոց պատրիարքարանի—ընդհէմ լուսաւորչական հայ եկեղեցու, ապացուցանելու համար

կաթոլիկ եկեղեցու հարազարութիւնը, միւսի անհարազարութիւնը, մի խօսքով մի զուտ կրօնական պարմական-դաւանական խնդիր!։ Եւ այդ ամենը կոչում՝ էր... հայ որբերին օգնելու գործ... կաթոլիկ կղերի կողմից։

Բազմավէպ'ը և Հանդէս Ամսօրեան խոր լուռ թիւն պահպանեցին այս ամենի մասին։ Որովհետեւ նոցա կրօնական ուշութիւնը խելքում է ամեն ինչ։

Եւ ինչի առիթով է Բազմավէպ'ը այս ամենը դրում։ Ահա ինչ առիթով։

Նորերս Բազմավէպ'ը մի յարուկ յալփարարութեամբ դիմեց մի քեսակ հանգանակութեան (մի պարկերազարդ հրամարակութեան բաժանորդ դրւելու հրաւերով), որի արդիւնքով խոսքանում էր հայ որբեր պահպանել։ Վենեպի թերթը այժմ գանգավուում է թէ սԴարձեալ կրօնական խնդիրներն անոր մէջ մուտ դրան և այդ ներական գործին խոչընդոտն հանդիսացան։

Եւ Բազմավէպ'ը ձեւցնում է իր թէ մի լրագիր էր որ—

«Խրոննեցուց ամբողջ հայ հասարակութեանը, որոնք (?) չը մասնակցեցան մեր հանգանակութեան, այս շարժումը Բազմավէպ'ին ընտալիս չհասուց, բայց որբերը լացուց։ և կրօնական մոլեռանդութիւնը որքի դակ առաւ նաև ազգասիրութիւնը։»

Մինչդեռ ճշմարտութիւնը սա է որ կաթոլիկ կղերը—սորամէջ նաև Մինիթարեան միաբանութիւնները—ինքն է իր դեռ ևս թարմ անցեալով յալփարարել ի լուր աշխարհի, որ հայ որբեիներին մի կրոր հաց գալը նա այլ կերպ չի հասկանում բայց եթէ կաթոլիկ և այն՝ որեթէ անմիջապէս կաթոլիկ յարձնելով նոցաւ

Եւ ինչ ռազմասիրութիւն է դիցուք հէնց ոռոսա-հայերի դրամով Վենեպիկեցիների ձեռքով մի գամեեակ հայ լուսաւորչական որբեր խնամելը, քանի որ նոյն որբերին խնամելու համար ուրիշ աւելի ապահով օրգաններ կան—գեղական գոտմակա-հայ հասարակութիւնները, որոնք որբանոցներ են պահում։ Խսկ դրամ նոցա հասցնել կարելի է—և մասամբ անուում էլ է—հայոց պարրիարքի ձեռքով։ Կեղծ արդասունք։

Բազմավէպ'ը կամենում է կաթոլիկ դարձնելու առարկութեան Դէմն առնել՝ յայտնելով որ կաթոլիկ և լուսաւորչական եկեղեցի-

ների միջև քարբերութիւնը և ն է—կրօնական փոքրիկ խնդիր
մը: Բայց հայ ինքնելիքնցիւրն հետքը բքրող առարկան դաւա-
նաբանական խնդիրը չի կարո մուկ կը կրօնական խնդրի մեծ ու
փոքր լինելը այսօրս չի շափու դաւանաբանական նրբութիւնները
ձանաշելով, մի գործ որ Բազմավէպ'ը թողնում է կղերական խոհու-
նակ և գիտուն դասակարգին: Կաթոլիկ կղերը մի զօրեղ կազմա-
կելուած մարմին է, որի ոչմը զգացել են աշխարհքիս ամենա-
մեծ հասարակութիւնները ու պետութիւնները. Դարերով կազմա-
կերպւած այդ մարմինը ունի որոշ սկզբունքներ, որ նա մոցնում է
ամեն բանի մէջ: Այդ ոգին բանում է դէսի ամեն ինչ կղերին են-
թարկելու դրութիւնը, իսկ այդ դրութիւնն էլ դէսի մրաւոր ու
ոգեկան անկումը: Միմիայն շատ զօրաւոր պետական կազմակերպու-
թիւններ կարողանում են դորա դէմ մարդնչել և միմիայն յաջո-
ղութեան դէպքում՝ ժամանակի ոգին փրկել նորա ճիրաններից: Եւ
եթէ այդպէս է, եթէ կաթոլիկ պրոպագանդայի հետ կապւած է
քաղաքակրթութեան մի հակակրելի ու շղութիւն, մի՞թէ ինքնելի-
գէնոք սերունդներին կ'սազէր անդարբեր աչքով նայել յատկապէս
կաթոլիկ կրօնաւորների գործունէութեանը քրիստոնեայ ազգերի մէջ:
Եթէ լինէր այդ ընդհանուր պատճառը—մոքի, ոգու բռնա-
դարութիւնը—ինչու պիտի այսօր Բազմավէպ'ը գանգարէր, թէ
պկաթոլիկէ քահանացին դաւանանքը որ ամենափոքր ուարերու-
մը միայն ունի լուսաւորչականէն, բայց դարձեալ մոլեւանդու-
թիւնը կը մշէ գոչելու սի խաչ հան զդաւ—եղէք բոլոքական
բաց ոչ կաթոլիկու:

Ոչ: Ընդհիմադրութիւնը, օրինական, բնական ընդդիմադրութիւնը
դեռ չի նշանակում «ի խաչ հաներ». և ոչ էլ մեզնում քարոզել
է թէ՝ «եղէք բոլոքական», քանի որ թէ կաթոլիկ, թէ բոլոքա-
կան, թէ լուսաւորչական հաւասարապէս պէտք ունին պարզ լու-
սաւորութեան քարոզի. բայց այս կայ որ բոլոքականների գործու-
նէութիւնը Փոքր Ասիայում տարբեր է կաթոլիկ պատերների գոր-
ծունէութիւնից, և հէնց Մուրճի անցեալ համարի մէջ Գերմանա-
կան օղնութիւնը Տաճկահայերին, յօդւածում ասւում էր՝

«Վերջապէս, Հիլֆսբունդի (=գերման օղնութեան ընկերու-
թեան) շնորհիւնոր արգելք է սովելծում կաթոլիկութեան պա-

րածմանը Հայաստանում։ Այն ծառալութիւնը միայն որ կարաբել են արդէն ամերիկացիք, արժանի է արդէն որ յաջաշութիւն ցանկանք Հիլֆսբունդին։ (Մուրճ 1900 № 4, էջ 521):

Եւ կաթոլիկ հայ հասարակութեան այն ընտրեալ մասը, որ կղերական ազգեցութիւնների ներքոյ չէ, և որը մկրտւել է քաղաքակրթութեան ընդհանուր աւազանի մէջ, չի կարող թէ վերը ակնարկւած և թէ մեր այս յօշտածի միոքը այլ կերպ հասկանալ քան ինչպէս որ պէտք է!.

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ